

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ
ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Դանիայի Թագավարությունը,
ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և
հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիա,
համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր
Պայմանավորվող պետություններից մեկի կամ միաժամանակ երկուսի ռեզիդենտներ
են:

ՀՈԴՎԱԾ 2

ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա
քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների անունից
եկամտից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ այն եղանակից, որով
դրանք գանձվում են:

2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում համախառն եկամտի,
համախառն գույքի նկատմամբ կիրառվող բոլոր հարկերը կամ եկամտի կամ գույքի
տարրերի, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող
եկամուտների հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող ռոճիկների կամ
աշխատավարձերի համախառն գումարի հարկերը, ինչպես նաև գույքի
գնահատման նկատմամբ կիրառվող հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գործող հետևյալ հարկերի նկատմամբ.

a) Դանիայում՝

i) պետությանը վճարվող եկամտահարկ.

ii) վճարվող համայնքային եկամտահարկ:

b) Հայաստանում՝

i) շահութահարկ.

ii) եկամտային հարկ.

iii) գույքահարկ:

4. Սույն Կոնվենցիան կկիրառվի նաև ցանկացած նույնական կամ էապես նման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրման ամսաթվից հետո՝ ի լրումն 3-րդ կետում նշված գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կծանուցեն իրենց հարկային օրենսդրությունում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

a) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» եզրույթները, համատեքստից կախված, նշանակում են՝ Հայաստան կամ Դանիա.

b) «Դանիա» եզրույթը նշանակում է Դանիայի Թագավորություն, ներառյալ ցանկացած տարածք Դանիայի տարածքային ջրերից դուրս, որը, միջազգային օրենքի համաձայն, նշանակում է, կամ, դանիական օրենքների համաձայն, այսուհետ կարող է նշանակել՝ տարածք, որի նկատմամբ Դանիան կարող է իրականացնել ինքնիշխան իրավունքներ՝ կապված ծովի ընդերքի կամ իր ընդերքի ու հարակից ջրերի բնական ռեսուրսների հետազոտման ու շահագործման հետ և տարածքի հետազոտման ու տնտեսական շահագործման այլ գործունեության հետ. եզրույթը չի ներառում Ֆարերյան կղզիները և Գրենլանդիան.

c) «Հայաստան» եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է իր ինքնիշխան իրավունքները և իրականացնում

լիազորությունները՝ համաձայն ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի.

d) «անձ» եզրույթը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

e) «ընկերություն» եզրույթը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ.

f) «ձեռնարկություն» եզրույթը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

g) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եզրույթները, համապատասխանաբար, նշանակում են՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

h) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է՝ ցանկացած փոխադրում նավով կամ օդանավով, որն իրականացվում է Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետության վայրերի միջև.

i) «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է.

i. Դանիայի դեպքում՝

Հարկային հարցերով նախարար կամ նրա լիազորված ներկայացուցիչ.

ii. Հայաստանի դեպքում՝

Ֆինանսների նախարար կամ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ կամ վերջիններիս լիազորված ներկայացուցիչ.

յ) «քաղաքացի» եզրույթը Պայմանավորվող պետության առումով նշանակում է.

i. ցանկացած ֆիզիկական անձ, ով ունի այդ Պայմանավորվող պետության ազգությունը կամ քաղաքացիությունը, և

ii. ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա, որն իր կարգավիճակն ստացել է այդ Պայմանավորվող պետությունում գործող օրենքների համաձայն.

k) «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեությունների իրականացում.

l) «մասնագիտական ծառայություններ» եզրույթը մասնավորապես ներառում է անկախ գիտական, գրական, դերասանական, կրթական կամ դասավանդման գործունեությունը, ինչպես նաև ֆիզիկոսների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների կողմից իրականացվող անկախ գործունեությունը:

2. Ինչ վերաբերում է Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելուն, նրանում չսահմանված ցանկացած եզրույթ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն ունի այդ պահին, այդ Պետության օրենսդրության համաձայն, այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, ընդ որում՝ այդ Պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ եզրույթին տրվող նշանակության նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» եզրույթը նշանակում է՝ ցանկացած անձ, ով, այդ Պետության օրենքների համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, ռեզիդենտության, ստեղծման (գրանցման) վայրի, կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման բնույթի չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ

Պետությունը և նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանումը կամ տեղական իշխանությունը: Այդ եզրույթը, սակայն, չի ներառում որևէ անձի, ով ենթակա է հարկման այդ Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի մասով:

2. Կենսաթոշակային հիմնադրամը կամ նմանատիպ այլ հաստատությունը, որը տրամադրում է կենսաթոշակային սխեմաներ, որում կարող են մասնակցել անձինք՝ կենսաթոշակ ստանալու նպատակով, և որն ստեղծվել է և հարկման նպատակներով ճանաչվել է Պայմանավորվող պետության օրենքների համաձայն, սույն Կոնվենցիայի կիրառման նպատակներով կհամարվի այդ Պետության ռեզիդենտ:

3. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

a) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են.

b) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է.

c) եթե նա սովորաբար երկու պետություններում էլ բնակվում է, կամ եթե սովորաբար չի բնակվում դրանցից ոչ մեկում, համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի ազգային անձն է.

d) եթե նա երկու Պետությունների ազգային անձ է կամ դրանցից և ոչ մեկում այդպիսին չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

4. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձից տարբերվող անձը կամ ընկերությունը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ձգտում են այդ հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ և որոշել սույն Կոնվենցիայի կիրառման եղանակը այդ անձի նկատմամբ: Փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում նման անձը իրավունք չունի պահանջելու որևէ արտոնություն կամ սույն Կոնվենցիայով նախատեսված հարկից ազատում:

ՀՈԴՎԱԾ 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշտական հաստատություն» եզրույթը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» եզրույթը ներառում է, մասնավորապես.

a) կառավարման վայր,

b) մասնաճյուղ,

c) գրասենյակ,

d) գործարան,

e) արհեստանոց և

f) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրա հետ միասին վերահսկողական գործունեությունը համարվում է մշտական հաստատություն միայն այն դեպքում, եթե դրանք շարունակվում են ավելի քան ինն ամիս:

4. Բնական ռեսուրսների հետազոտման համար օգտագործվող՝ տեղադրման կամ հորատման սարքավորումները կամ նավը համարվում են մշտական հաստատություն, եթե միայն այդ գործունեությունը շարունակվում է ավելի քան ինն ամիսը: Մեկ այլ ձեռնարկության հետ փոխկապակցված ձեռնարկության կողմից իրականացվող գործունեությունը համարվում է իրականացված այն ձեռնարկության կողմից, որի հետ այն փոխկապակցված է, եթե խնդրո առարկա գործունեությունը՝

a) էապես նման է վերջին նշված ձեռնարկության կողմից իրականացվող գործունեությանը և

b) վերաբերում է նույն ծրագրին կամ գործողությանը.

բացառությամբ այն դեպքի, երբ այդ գործունեությունն իրականացվում է միաժամանակ: Սույն կետի կիրառման նպատակներով ձեռնարկությունները համարվում են փոխկապակցված, եթե նույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են ձեռնարկությունների կառավարմանը, վերահսկողությանը կամ կապիտալում:

5. Անկախ սույն հոդվածի նախորդող դրույթներից՝ «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում՝

a) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.

b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.

c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով.

d) գործունեության կայուն վայրի պահումը ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

e) գործունեության կայուն վայրի պահումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով.

f) գործունեության կայուն վայրի պահումը բացառապես «a»-«e» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ գործունեության կայուն վայրի պահման համընդհանուր գործունեությունը այդ համակցության արդյունքում շարունակում է կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

6. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից, եթե անկախ կարգավիճակով գործակալից տարբեր անձը, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում ցանկացած գործունեության մասով, որն այդ անձն իրականացնում է տվյալ ձեռնարկության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 5-րդ կետում նշվածով, որը եթե իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության՝ այդ կետի դրույթների համաձայն:

7. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ նա ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, ընդհանուր հանձնաժողովի գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք

գործում են իրենց ձեռնարկատիրական սովորական գործունեության շրջանակներում:

8. Այն փաստը, որ ընկերությունը, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատություն:

ՀՈԴՎԱԾ 6

ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» եզրույթն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Ամեն դեպքում անշարժ գույքից եկամուտը ներառում է եկամուտը անշարժ գույքին օժանդակ գույքից, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասուններից ու սարքավորումներից, իրավունքներից, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները. նավերը և օդանավերը չեն դիտարկվում որպես անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացած եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7

ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է վերը նշված ձևով, ձեռնարկության շահույթը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. 3-րդ կետի դրույթների համաձայն՝ այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն մշտական հաստատության միջոցով մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մշտական հաստատությանը յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում պետք է վերագրվի այն շահույթը, որը ենթադրվում է, որ նա կստանար, եթե լիներ տարբեր և առանձին ձեռնարկություն, որն իրականացրել է նման կամ նմանատիպ գործունեություն նման կամ նմանատիպ պայմաններում և եղել է լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթի որոշման ժամանակ որպես նվազեցումներ կթույլատրվեն այն ծախսերը, որոնք առաջանում են մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեության նպատակներով, ներառյալ գործադիր և ընդհանուր վարչական ծախսերը, որոնք առաջացել են կա՛մ այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը, կա՛մ ցանկացած այլ վայրում:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունում ընդունելի է մշտական հաստատությանը վերագրելի շահույթը որոշել ձեռնարկության համախառն շահույթի համամասնությունների հիման վրա, 2-րդ կետը ոչ մի դեպքում չի կարող

խոչընդոտել Պայմանավորվող պետությանը հարկվող շահույթը որոշել այն համամասնության համաձայն, որը կարող է ընդունելի լինել. այնուամենայնիվ որոշված համամասնության մեթոդը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համահունչ լինի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատությանը չի վերագրվի շահույթ միայն այն պատճառով, որ մշտական հաստատության կողմից ապրանքներ կամ արտադրանք է գնվել ձեռնարկության համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրելի շահույթը կորոշվի նույն մեթոդով, յուրաքանչյուր տարի, եթե հակառակը կիրառելու համար չկա այլ լավ և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին քննարկվում են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա այս հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

ՀՈԴՎԱԾ 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի նպատակներով միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ներառում է.

a) միջազգային փոխադրումներում գործող նավերի կամ օդանավերի ամբողջական (ժամանակի կամ ուղևորության) վարձակալությունից ստացված շահույթը.

b) նավերի կամ օդանավերի (առանց անձնակազմի) վարձակալությունից ստացված շահույթը, երբ վարձակալությունը վերաբերում է միջազգային փոխադրումներում գործող նավերին կամ օդանավերին, և

c) կոնտեյներների (ներառյալ կցանքներ, բեռնախցիկներ և բեռնարկղերի փոխադրման հետ կապված սարքավորումները) օգտագործումից, պահպանումից և վարձակալությունից ստացված շահույթը, որոնք օգտագործվում են ապրանքների և արտադրանքի տեղափոխման համար այն դեպքում, երբ օգտագործումը, պահպանումը կամ վարձակալությունը վերաբերում է միջազգային փոխադրումներում շահագործվող նավերին կամ օդանավերին:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից՝ միավորումում, համատեղ գործունեության մեջ, բիզնես կոնսորցիումում կամ միջազգային շահագործման գործակալությունում մասնակցությունից նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթի բաժնեմասի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ՝

a) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակից է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ գույքին, կամ

b) նույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակից են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ գույքին,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, եթե չլինեին այդ պայմանները, հաշվեգրված կլիներ այդ ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը նշված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդպիսի շահույթից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը համարում է ճշգրտումը արդարացված: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

ՀՈԴՎԱԾ 10

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից վճարվող շահաբաժինները կարող են նաև հարկվել այդ Պետությունում՝ այդ Պետության օրենքների համաձայն. սակայն եթե այդ շահաբաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այդ ձևով գանձված հարկը չի կարող գերազանցել՝

a) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը ընկերություն է, որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության կապիտալի առնվազն 50 տոկոսը և շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալում ներդրել է ավելի քան 2 միլիոն

եվրո կամ դրա համարժեքը՝ հայկական կամ դանիական փոխարժեքով՝ շահաբաժիններ վճարելու ամսաթվի դրությամբ.

b) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատեր է հանդիսանում մյուս Պայմանավորվող պետությունը կամ այդ մյուս Պայմանավորվող պետության կենտրոնական բանկը կամ ցանկացած ազգային գործակալություն կամ ցանկացած այլ գործակալություն (ներառյալ՝ ֆինանսական ինստիտուտ), որոնք պատկանում են այդ մյուս պետության կառավարությանը.

c) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը ընկերություն է, որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը և շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալում ներդրել է ավելի քան 100,000 եվրո կամ դրա համարժեքը՝ հայկական կամ դանիական փոխարժեքով՝ շահաբաժիններ վճարելու ամսաթվի դրությամբ.

d) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն այս սահմանափակումների կիրառման եղանակը: Սույն կետը չի ազդում ընկերության հարկման վրա այն շահույթի մասով, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» եզրույթը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնեմասերից, «jouissance»-ի բաժնեմասերից կամ «jouissance»-ի իրավունքներից, հանքարդյունահանման բաժնեմասերից, հիմնադիրների բաժնեմասերից կամ այլ իրավունքներ, որոնք չեն հանդիսանում պարտապահանջ, շահույթում մասնակցությունից, ինչպես նաև այլ կորպորատիվ իրավունքներից ստացվող եկամուտներ, որոնք ենթակա են հարկման նույն մոտեցմանը, որոնք կիրառելի են բաժնեմասերի եկամտի նկատմամբ՝ այն պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, ոչ էլ կարող է ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

ՀՈԴՎԱԾ 11

ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, մի Պայմանավորվող պետությունում առաջացող նման տոկոսները կարող են հարկվել այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի՝

a) տոկոսների համախառն գումարի 0 տոկոսը, եթե դրանք վճարվում են Պայմանավորվող պետությանը կամ նրա տեղական իշխանությանը, ներառյալ՝ այդ Պետության կենտրոնական բանկին, կամ այլ հաստատության, գործակալության կամ հիմնադրամի, որի սեփականատեր է հանդիսանում Պայմանավորվող պետության կառավարությունը.

b) տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը, եթե դրանք վճարվում են բանկային կազմակերպության կողմից տրամադրված ցանկացած տեսակի վարկի դիմաց.

c) տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն այս սահմանափակումների կիրառման եղանակը:

3. «Տոկոսներ» եզրույթը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոթեքային ապահովումից և պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ

վճարող անձը, անկախ նրանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերության պատճառով տոկոսների գումարը պարտապահանջի վերաբերյալ, որի համար այն վճարվում է, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերության բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների՝ ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

ՀՈԴՎԱԾ 12

ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, մի Պայմանավորվող պետությունում առաջացող ռոյալթիները կարող են հարկվել նաև այդ պետության օրենքների համաձայն. բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի՝

a) ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը՝ 3-րդ կետի «a» և «b» ենթակետերում նշված տեսակի վճարումների դիմաց.

b) ռոյալթիների համախառն գումարի 10 տոկոսը, եթե դրանք վճարվում են 3-րդ կետի «c» ենթակետում նշված տեսակի վճարումների դիմաց:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն այս սահմանափակման կիրառման եղանակը:

3. «Ռոյալթիներ» եզրույթը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ ստացված ցանկացած տեսակի վճարում՝ կապված.

a) ցանկացած համակարգչային ծրագրի, պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի կամ պլանի օգտագործման կամ օգտագործման իրավունքի հետ.

b) ցանկացած գաղտնի բանաձևի կամ գործընթացի, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին (նոու-հաու) վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի հետ.

c) ցանկացած գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքի հեղինակային իրավունքի՝ ներառյալ կինոնկարների և հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների համար օգտագործվող ֆիլմերի կամ սկավառակների օգտագործման կամ օգտագործման իրավունքի հետ:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած մի Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետությունն է, նրա քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանությունը կամ այդ պետության ռեզիդենտը: Սակայն երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ նրանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտականությունը, և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են

առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերության պատճառով ոռոյաթիների գումարը՝ կապված օգտագործման, իրավունքի կամ տեղեկատվության հետ, որի համար դրանք վճարվում են, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերության բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

ՀՈԴՎԱԾ 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾ

1. Մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող և 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Միջազգային փոխադրումներում ապրանքների կամ արտադրանքի փոխադրման համար օգտագործվող բեռնարկղերի (ներառյալ կցանքները, բեռնախցիկները և բեռնարկղերի փոխադրման հետ կապված սարքավորումները) օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի օտարումից ստացված արժեքի հավելաճը, որի արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

6. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է գույքն օտարողը:

7. Այն դեպքում, երբ տարբեր երկրների ձեռնարկություններ համաձայնվել են միջազգային բեռնափոխադրումներում շահագործել նավեր կամ օդանավեր գործարքային կոնսորցիումի միջոցով, 3-րդ կետի դրույթները կիրառվում են արժեքի հավելաճի միայն այն համամասնության նկատմամբ, որը համապատասխանում է Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ այդ կոնսորցիումում ունեցած մասնակցությանը:

ՀՈԴՎԱԾ 14

ԵՎԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի կատարվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը

կատարվում է այդ կերպով, դրանից ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պետությունում, եթե.

a) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և

b) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

c) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը, որը վճարվել է Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից, կարող է հարկվել այդ Պետությունում:

4. Անկախ 3-րդ կետի դրույթներից՝ Դանիայում գտնվող՝ դանիական, նորվեգական և շվեդական օդային տրանսպորտի կոնսորցիում Սկանդինավյան ավիաուղիների համակարգ (ՍԱՀ)-ի մշտական հաստատությունից ստացված եկամուտները՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց, կարող են հարկվել Դանիայում:

ՀՈԴՎԱԾ 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 16

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Անկախ 14-րդ հոդվածի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, հնչափսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ այդ ռեզիդենտի իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչ կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե արվեստի գործիչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, այդ եկամուտը, անկախ 14-րդ հոդվածի դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչ կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել միայն այդ Պետությունում, եթե այդ գործունեությունն իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում մշակութային կամ սպորտային փոխանակման ծրագրերի շրջանակներում, որոնք հաստատված են երկու Պայմանավորվող պետությունների կողմից:

ՀՈԴՎԱԾ 17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

1. Մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ անհատի ստացած վճարումները մյուս Պայմանավորվող պետության սոցիալական ապահովագրության օրենսդրության կամ ցանկացած այլ սխեմայի համաձայն, որը ստեղծվել է այդ մյուս Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղակական իշխանության կողմից, ենթակա են հարկման այդ մյուս պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները և այլ համանման վճարումները, անկախ նրանից՝ դրանք կապված են նախկին աշխատանքի հետ, թե ոչ, ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում: Այնուամենայնիվ, այդպիսի կենսաթոշակները և համանման այլ վճարումները կարող են հարկվել առաջինը նշված Պետությունում, եթե.

a) շահառուի կողմից կենսաթոշակային սխեմային վճարված հատկացումները նվազեցվել են շահառուի հարկվող եկամտից առաջինը նշված Պայմանավորվող պետությունում՝ այդ Պետության օրենքի համաձայն, կամ

b) գործատուի վճարած հատկացումները շահառուի համար հարկվող եկամուտ չէին առաջինը նշված Պայմանավորվող պետությունում՝ այդ Պետության օրենքի համաձայն:

3. Կենսաթոշակները կհամարվեն առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարվել են կենսաթոշակային սխեմաներ ապահովող կենսաթոշակային հիմնադրամի կամ համանման այլ հաստատության կողմից, որոնցում կենսաթոշակային նպաստներ ստանալու նպատակով կարող են մասնակցել անհատներ, որտեղ նման կենսաթոշակային հիմնադրամը կամ համանման այլ հաստատությունը ստեղծվել ու հարկման նպատակներով ճանաչվել են՝ այդ Պետության օրենքների համաձայն:

4. 1-ին կետում նշված վճարումները չպետք է հարկվեն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է ստացողը, եթե այդպիսի վճարումները ազատված կլինեն հարկերից մյուս Պայմանավորվող պետությունում, այդ Պետության օրենքների համաձայն, այդ Պետության ռեզիդենտին վճարվելու դեպքում:

ՀՈԴՎԱԾ 18

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. a) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ նրա տեղական իշխանության կողմից վճարված կենսաթոշակից բացի՝ այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ պետական բնույթի գործառույթներ իրականացնող մարմնին մատուցվող ծառայությունների դիմաց անհատին վճարվող աշխատավարձերը, ռոճիկները և համանման այլ վարձատրությունները հարկվում են միայն այդ Պետությունում:

b) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում, և անհատը այդ պետության ռեզիդենտ է, ով.

i) այդ պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. a) Ցանկացած կենսաթոշակ, որը վճարվել է անհատին Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից կամ Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից ստեղծված հիմադրամներից՝ այդ պետությանը կամ նրա քաղաքական ստորաբաժանմանը կամ տեղական իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց, ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Այնուամենայնիվ, նման կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե անհատը այդ Պետության ռեզիդենտ է և ազգային անձ:

3. 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձերի, ռոճիկների և համանման այլ վարձատրություններին նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 19

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը նշված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չի հարկման այդ Պետությունում իր ապրելու, կրթության կամ մասնագիտանալու համար ստացած վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

ՀՈԴՎԱԾ 20

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

1. Պրոֆեսորը կամ հետազոտողը, ով ժամանել է Պայմանավորվող պետություն ոչ ավել, քան վեց ամիս ժամկետով՝ այդ պետությունում գտնվող համալսարանում կամ այլ նմանատիպ հաստատությունում ուսուցման կամ հետազոտությամբ զբաղվելու նպատակով, և ով անմիջապես մինչև այդ ժամանումը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, կազատվի հարկումից առաջին նշված պետությունում նման ուսուցման կամ հետազոտության դիմաց ստացած վարձատրության առնչությամբ՝ պայմանով, որ այդպիսի վարձատրությունը հարկվում է մյուս Պայմանավորվող պետությունում: Սույն կետը կկիրառվի անհատի՝ Պայմանավորվող պետություն առաջին այցելության օրվանից

միայն վեց ամիս ժամկետը չգերազանցելու դեպքում և չի տարածվում այն անձանց վրա, ովքեր այդ Պետության ազգային անձինք են:

2. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում հետազոտությունից ստացվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունն անհատի կողմից իրականացվում է հանրային շահի համար և ոչ թե հիմնականում հոգուտ մասնավոր շահերի:

ՀՈԴՎԱԾ 21

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն Կոնվենցիայի վերոնշյալ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամտի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ եթե մի Պայմանավորվող պետության ռեզիդենտը մյուս Պայմանավորվող պետության աղբյուրներից շահումների ձևով ստանում է եկամուտ վիճակախաղերից, խաչքառ հանելուկներից, արշավներից, ներառյալ՝ ձիարշավներից, խաղաքարտերից և ցանկացած այլ բնույթի խաղից կամ դրամախաղից կամ ցանկացած տեսակի կամ բնույթի գրազից, նման եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

ՀՈԴՎԱԾ 22

ԳՈՒՅՔ

1. Կապիտալը, որը ներկայացված է 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով, պատկանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտին և գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Կապիտալը, որը ներկայացված է շարժական գույքի տեսքով, որը կազմում է մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Կապիտալը, որը ներկայացված է մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով ու օդանավերով և շարժական գույքով, որը վերաբերում է նման նավերի և օդանավերի շահագործմանը, ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տեսակները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 23

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

Կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

1. Դանիայում՝

ա) «c» ենթակետի դրույթների համաձայն, երբ Դանիայի ռեզիդենտը ստանում է եկամուտ կամ տնօրինում է գույք, որը, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, ենթակա է հարկման Հայաստանում, Դանիան պետք է թույլ տա այդ ռեզիդենտի եկամտից կամ գույքից գանձվող հարկից նվազեցնել Հայաստանում վճարված հարկին հավասար գումար.

բ) Այնուամենայնիվ, այդպիսի նվազեցումը չի կարող գերազանցել եկամտից կամ գույքից գանձվող հարկի այն մասը, որը հաշվարկվում է մինչև նվազեցումը, որը վերագրելի է եկամտին կամ գույքին և կարող է հարկվել Հայաստանում.

գ) Այն դեպքում, երբ Դանիայի ռեզիդենտը ստանում է եկամուտ կամ ունի գույք, որը, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, ենթակա է հարկման

Հայաստանում, Դանիան կարող է ներառել այդպիսի եկամուտը կամ գույքը հարկման բազայում, բայց թույլ տալ եկամտից կամ գույքից գանձվող հարկից նվազեցնել հարկի այն մասը, որը վերագրելի է Հայաստանից ստացված եկամտին կամ Հայաստանում գտնվող գույքին:

2. Հայաստանում՝

a) երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, կարող է հարկվել Դանիայում, Հայաստանը պետք է թույլ տա.

i) այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից նվազեցնել Դանիայում վճարված եկամտից գանձվող հարկին հավասար գումար.

ii) այդ ռեզիդենտի գույքից գանձվող հարկից նվազեցնել Դանիայում վճարված գույքից գանձվող հարկին հավասար գումար:

Սակայն նման նվազեցումը յուրաքանչյուր դեպքում էլ չպիտի գերազանցի մինչև նվազեցումը հաշվարկված եկամտից գանձվող հարկի կամ գույքից գանձվող հարկի այն մասը, որը վերաբերում է, հանգամանքներից կախված, այն եկամտին կամ գույքին, որը կարող էր հարկվել Դանիայում:

b) Երբ, սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Դանիայում ազատվում է հարկումից, Հայաստանը, համենայն դեպս, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

ՀՈԴՎԱԾ 24

ՈՉ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որին նույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ

մյուս պետության ազգային անձինք: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանդիսանում են Պայմանավորվող պետության ռեզիդենտներ, որևէ Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, որն այլ է կամ ավելի ծանր է, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որին նույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ պետության ազգային անձինք:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս պետությունում, քան այդ մյուս պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան պարտավորությունների հաշվին հարկման նպատակներով տրամադրելու ցանկացած անձնական արտոնություն, նվազեցում և զեղչ, որը նա շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 6-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները, տոկոսները, ռոյալթիները և Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են հանման այն նույն պայմաններով, որով հանվում են առաջինը նշված պետության ռեզիդենտին վճարելիս:

5. Պայմանավորվող պետության այն ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն

վերահսկվում է այդ մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պայմանավորվող պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը նշված պետության այլ նման ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 25

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ պետությունների ներպետական օրենսդրություններով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը բողոքը համարի հիմնավորված, և եթե ինքը չկարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառելու սույն Կոնվենցիային ոչ համապատասխան հարկումը: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենսդրություններում առկա ցանկացած ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն հարթել ցանկացած դժվարություն կամ հակասություն, որոնք կարող են առաջանալ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում համատեղ խորհրդակցել՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ըմբռնման մեջ համաձայնության հասնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 26

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսին տեղեկություններ, որ կանխատեսելիորեն համապատասխան են սույն Կոնվենցիայի դրույթները կատարելու կամ Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների անունից կիրառվող ցանկացած տեսակի ու բնույթի հարկի վերաբերյալ ներպետական օրենքների կառավարումը կամ կիրառումը իրականացնելու համար այնքանով, որքանով դրանց շրջանակներում հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ պետության ներպետական օրենքներին համապատասխան ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, դրանց վերաբերյալ հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, դրանց կապակցությամբ բողոքարկումների քննմանը կամ վերոնշյալի վերահսկողությանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք

կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում: Չնայած վերոգրյալին՝ Պայմանավորվող պետությունից ստացված տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե ստացված տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով երկու պետությունների օրենքներին համապատասխան, և պետությանը տրամադրող իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

a) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ:

b) տրամադրել տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում:

c) տրամադրել տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է հանրային քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկությունների ձեռք բերման իր միջոցները՝ ստանալու համար պահանջված տեղեկությունները. նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս պետությունն իր հարկային նպատակներով չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը 3-րդ կետի ուժով սահմանափակվում է, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը չունի այդպիսի տեղեկությունների նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատությունը, թեկնածուն կամ գործակալությունում աշխատող անձը կամ վստահված անձը կամ՝ որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

ՀՈԴՎԱԾ 27

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունները միմյանց օգնություն կցուցաբերեն եկամտային հայցերի հավաքագրման գործում: Այդ օգնությունը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են որոշել սույն հոդվածի կիրառման եղանակը:

2. «Եկամտային հայց» եզրույթը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ Պայմանավորվող պետությունների, նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների անունից սահմանված ցանկացած տեսակի և բնույթի հարկի առնչությամբ ապառքի գումար՝ այնքանով, ինչքանով այդ հարկումը չի հակասում սույն Կոնվենցիայի կամ ցանկացած այլ փաստաթղթի, որի կողմեր են Պայմանավորվող պետությունները, ինչպես նաև՝ այդպիսի գումարի հետ կապված տոկոսներ, վարչական տույժեր և հավաքագրման կամ պահման ծախսեր:

3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը պետք է իրականացնել այդ Պետության օրենքներով և վերաբերում է այն անձի ապառքին, ով այդ պահին այդ Պետության օրենքներով չի կարող կասեցնել դրա հավաքագրումը, այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմնի պահանջով, գանձման նպատակով կընդունվի մյուս Պետության իրավասու մարմնի կողմից: Այդ եկամտային հայցը կհավաքագրվի այդ մյուս Պետության կողմից՝ իր հարկերի գանձման և հավաքագրման համար կիրառվող օրենքների դրույթների համաձայն, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը:

4. Այն դեպքում, երբ Պետության եկամտային հայցը այնպիսի հայց է, որի վերաբերյալ այդ Պետությունը կարող է, իր օրենսդրության համաձայն, պաշտպանության միջոցառումներ իրականացնել դրա գանձումն ապահովելու համար, այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմնի պահանջով, պետք է ընդունվի մյուս Պետության իրավասու մարմնի կողմից՝ պահպանման միջոցառումներ իրականացնելու նպատակներով: Այդ մյուս Պետությունը պետք է, իր օրենքների դրույթներին համապատասխան, պաշտպանության միջոցառումներ իրականացնի այդ եկամտային հայցի առնչությամբ, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը, եթե նույնիսկ այդ միջոցառումների իրականացման պահին եկամտային հայցը ենթակա չէ կատարման առաջինը նշված պետությունում, կամ ապառքը վերաբերում է այն անձին, ով իրավունք ունի կասեցնելու դրա հավաքագրումը:

5. Անկախ 3-րդ և 4-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության կողմից 3-րդ և 4-րդ կետերի նպատակներով ընդունված եկամտային հայցը այդ Պետությունում ենթակա չէ ժամանակային սահմանափակման կամ չի ստանում այդ Պետության օրենքներով եկամտային հայցի նկատմամբ կիրառելի որևէ գերակայություն՝ որպես այդպիսին իր բնույթի պատճառով: Բացի այդ՝ 3-րդ կամ 4-րդ կետի նպատակներով Պայմանավորվող պետության կողմից ընդունված եկամտային հայցը չպետք է այդ Պետությունում ունենա որևէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամտային հայցի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով:

6. Պայմանավորվող պետության եկամտային հայցի գոյության, հիմնավորվածության կամ գումարի վերաբերյալ հայցերը չպետք է ներկայացվեն մյուս Պայմանավորվող պետության դատարաններ կամ վարչական մարմիններ:

7. Եթե Պայմանավորվող պետության կողմից 3-րդ կամ 4-րդ կետի համաձայն պահանջի ներկայացումից հետո՝ ցանկացած պահի և նախքան մյուս Պայմանավորվող պետության կողմից համապատասխան եկամտային հայցի հավաքագրումն ու առաջինը նշված Պետությանը փոխանցումը այդ եկամտային հայցը դադարում է գոյություն ունենալ՝

ա) 3-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում՝ առաջինը նշված Պետության եկամտային հայցը հնարավոր է իրականացնել այդ Պետության օրենսդրությամբ, և ապառքը վերաբերում է այն անձին, ով այդ պահին չի կարող, այդ Պետության օրենքների համաձայն, կասեցնել դրա հավաքագրումը, կամ

բ) 4-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում՝ առաջինը նշված Պետության եկամտային հայցը, որի առնչությամբ այդ Պետությունը կարող է, իր օրենքների համաձայն, պահպանման միջոցառումներ իրականացնել՝ դրա հավաքագրումն ապահովելու համար,

առաջինը նշված Պետության իրավասու մարմինն անմիջապես պետք է մյուս Պետության իրավասու մարմնին ծանուցի այդ փաստի մասին և, մյուս Պետության ընտրությամբ, առաջինը նշված Պետությունը դադարեցնի կամ հետ վերցնի իր հայցը:

8. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

a) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

b) իրականացնել հանրային քաղաքականությանը (հասարակական կարգին) հակասող միջոցառումներ.

c) ցուցաբերել աջակցություն, եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի իրականացրել հավաքագրման կամ պահպանման համար, հանգամանքներից կախված, իր օրենքներով կամ վարչական գործելակերպով ընդունված ողջամիտ բոլոր միջոցառումները.

d) ցուցաբերել աջակցություն այն դեպքերում, երբ վարչական բեռն այդ Պետության համար բացահայտորեն անհամաչափ է մյուս Պայմանավորվող պետության կողմից ստացվող եկամուտներին:

ՀՈԴՎԱԾ 28

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆինանսական արտոնությունները:

ՀՈԴՎԱԾ 29

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

1. Չնայած սույն Կոնվենցիայի 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներին՝ մի Պայմանավորվող պետությունում առաջացող եկամուտը, որի փաստացի սեփականատերն է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտը, կարող է հարկվել առաջինը նշված Պետությունում՝ ներպետական օրենսդրության համաձայն, եթե եկամտի այդ տեսակը ենթակա չէ հարկման, կամ, համաձայն օրենսդրության, մյուս Պայմանավորվող պետության արտասահմանյան աղբյուրից ստացվող եկամտի նկատմամբ կիրառվում է հարկման արտոնյալ մոտեցում:

2. Եկամտի տեսակը կհամարվի հարկման ենթակա, որտեղ այն համարվում է հարկվող եկամուտ՝ օրենսդրության համաձայն, և ազատված չէ հարկից, ոչ էլ օգտվում է հարկի գումարի ամբողջական նվազեցումից կամ զրո տոկոս դրույքաչափով հարկումից:

3. Եկամտի տեսակը կհամարվի մյուս Պայմանավորող պետությունում արտասահմանյան աղբյուրից ստացվող եկամտի նկատմամբ արտոնյալ մոտեցումներ ապահովող օրենսդրությանը ենթակա, երբ այդ Պետությունը տրամադրում է հարկման արտոնյալ մոտեցումներ այդպիսի եկամտի նկատմամբ հարկի դրույքաչափի կամ հարկվող բազայի նվազեցման կամ հարկի նվազեցման տեսքով, որը չի կիրառվում այդ Պետությունում առաջացող եկամտի նկատմամբ, և որի փաստացի սեփականատեր է այդ Պետության ռեզիդենտը:

4. Չնայած սույն Կոնվենցիայի այլ դրույթներին՝ եկամտի որևէ տեսակի սույն Կոնվենցիայի ներքո արտոնություն չի տրամադրվի, եթե այն նպատակահարմար է ներառել՝ հաշվի առնելով համապատասխան փաստերը և պայմանները, որ այդ արտոնության ստացումը համարվում է տվյալ պայմանավորվածության կամ գործարքի կատարման հիմնական նպատակ և ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնում է այդ արտոնությանը, մինչև որ չի հաստատվում, որ այդ արտոնության տրամադրումը համապատասխանում է և համահունչ է սույն Կոնվենցիայի դրույթներին:

ՀՈԴՎԱԾ 30

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով միմյանց կձանուցեն, որ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու համար սահմանադրական պահանջները կատարվել են:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի 1-ին կետում նշված ամենավերջին ծանուցման օրվանից և նրա դրույթները կգործեն.

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող առաջին օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարվելիք գումարների համար՝

ii) այլ հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող առաջին օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող եկամտային տարվա համար:

ՀՈԴՎԱԾ 31

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետություններից մեկի կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը՝

դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ներկայացնելով սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվանից հինգ տարի հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը:


i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցում տալու տարվան հաջորդող օրացուցային առաջին տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարվելիք գումարների համար, և

ii) այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցում տալու տարվան հաջորդող օրացուցային առաջին տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող եկամտային տարվա համար:


Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Կոպենհագեն քաղաքում, 2018 թվականին մարտի 14-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, դանիերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ առաջացած տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիայի ստորագրման պահին ներքոստորագրյալները համաձայնության եկան հետևյալ դրույթների շուրջ, որոնք կազմում են սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը.

1. Կոնվենցիայի մեկնաբանումը

Համաձայնեցված է, որ սույն Կոնվենցիայի դրույթները, որոնք մշակվել են եկամտի և գույքի մասին ՏՀՁԿ հարկային համաձայնագրի մոդելի համապատասխան դրույթների հիման վրա, ընդհանուր առմամբ ունեն այն նույն նշանակությունը, որ տրված է ՏՀՁԿ Մեկնաբանություններում: Նշված համաձայնեցումը չի վերաբերում.

a) ցանկացած Պայմանավորվող պետության կողմից՝ ՏՀՁԿ մոդելում կամ նրա Մեկնաբանություններում առկա վերապահումներին կամ դիտողություններին.

b) սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո իրավասու մարմինների կողմից համաձայնեցված ցանկացած հակասական մեկնաբանության:

ՏՀՁԿ Մեկնաբանությունները, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ վերանայվել, հանդիսանում են մեկնաբանման միջոց 1969 թվականի մայիսի 23-ի՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի իմաստով:

2. Հարկման նպատակով թափանցիկ միավորներ

Այն դեպքում, երբ եկամտի որևէ տեսակի ստացումն անձից կամ անձի միջոցով, որը Պայմանավորվող պետություններից որևէ մեկի օրենքների շրջանակներում համարվում է հարկման նպատակով թափանցիկ, այդ տեսակը

կհամարվի ստացված Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից այնքանով, որքանով այդ տեսակը համարվում է ռեզիդենտի եկամուտ այդ Պետության հարկային օրենսդրության նպատակներով:

3. 5-րդ հոդվածի 5-րդ կետի առնչությամբ

Համաձայնեցված է, որ «առաքում» հասկացությունն իր մեջ չի ներառում որևէ խանութ, որն զբաղվում է առևտրով ապրանքի առաքման համար նախատեսված վայրում:

4. 7-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ

Համաձայնեցված է, որ Պայմանավորվող պետության կողմից նվազեցման համար թուլատրելի ծախսերը ներառում են միայն այն ծախսերը, որոնք ենթակա են նվազեցման այդ Պետության ներպետական օրենսդրության համաձայն:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Կոպենհագեն քաղաքում, 2018 թվականի մարտի ~~14~~ ¹⁴ ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, դանիերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ առաջացած տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝

